


ատեն ինձի այնպէս կը թուէր որ կը կարդայ իր անգիր վիպագրութիւնը:

Իր պատմական և իր վիպագրական երկերուն մէջ, թէեւ ինքն ուզած է խօսող մը մնալ, ասով հանդերձ յայտնապէս կը տեսնուի իր գրական ընդունակութիւնը, լեզուն կը յայտնէ իր հայկաբանութեան հմտութիւնը: Վէպերուն մէջ կը յայտնէ նաեւ նկարագրող ոճը: Եւ ամէնէն ակելի ան՝ ունի մեծ յատկութիւն մը, պարզ գրելով վարպետ վիպասաններու պէս ընթերցող հրապուրելը:

Քերթուածներուն մէջ դարձեալ իր աչքին առջեւ ունեցած է ժողովուրդը, անոնց համար երգած է իր քերթուածները. հոն ցոյց տուած է իր ազգասիրութիւնը. բողոքած է անիրաւութեանց դէմ, ողբերգած է դաշոյններուն տակ զուլիւր կախած հայ նահատակին ողբերգութիւնը: Իր թատերագրութեանց մէջ արծարծած է ազգասիրութեան կրակը:

Սմբատ Բիւրատ մարեցաւ այն մտաւորական ջահերուն հետ, որոնք տարագրութեան ճամբուն վրայ տակաւին կը հաւատային թուրքին կեղծ բարեկամութեան: Սմբատ Բիւրատ դահիճին սուրբն տակ, տակաւին կը հաւատար որ ստորնութիւնը վեհանձնութեան փոխուելով Արդարութիւնը պիտի յաղթէր: Եւ արդարութիւնը կը յաղթուէր... ստորնութիւնը կը յաղթէր:

Հ. Ս. ԵՐԵՄՅԱՆ



Ս Ր Տ Ի Ս Լ Ե Տ

Կեղծ իք կայ այս աշխարհի մէջ,
Անվերջ գիրար կը հալածեն.
Սիրոյ ոչ մէկ հըրայրք անշէջ
Ըսպատէ մարդ արարածէն:

Սիրտ իմ, ինչ որ ունէիր դուն՝
Տըւիր առանց տարակոյտի,
Արդ հալածուած, նօթի, անտուն,
Զո՛ւր կը բախես դըռներն յոյսի:

Տիեզերքին մէջ՝ տիեզերք,
Կուրծքիս ներքեւ հրավառ արեւ,
Մըտքի պայքար ու սիրոյ վէրք՝
Սիրտ իմ, հանգչէ՛ այսուհետեւ:

Փափկանըկատ, ազնւական
Ըզգացումներ ունէիր դուն,
Եւ ամէնուն տըւիր աժան,
Դուն՝ անտարբեր, անոնք՝ արթուն...:

Քեզ խաբեցին անզըթօրէն,
Բարութենէդ խըլեցին լոյս.
Մինչ դուն կեանքիդ գընով նորէն
Եղար խորան ու արշալոյս:

Ու սիրեցիր մաքուր սիրով,
Բայց մընացիր անարձագանգ.
Վարդն ու Եղիճ իրարու քով՝
Զեն արծարծեր հըմայք ու կեանք:

Քեզ չըճանչցան. ու դուն եղար
Զո՛հն անըզգայ հոգիներու.
Ծիծեռնակի պէս դողահար
Մըղեցին քեզ բոյնէդ հետու:

Հոգով աղքատ արարածին
Զըզըլացար ամէն բարիք,
Նըւիրումով միշտ նորածին՝
Հիմակ չունիս սէր ու Երգիք:

Գիշերուն մէջ կը թափառիս,
Կը հեկեկաս աստղերուն տակ.
Անպատին մէջ՝ ովասիս,
Զորերուն մէջ վազող գետակ:

Դուրսը ցուրտ է, ու ամէն ինչ
Հովին լացով կը դողդողայ.
Ո՛չ Երկինք կայ քեզ համար ջինջ,
Ոչ ալ կայան երկրի վըրայ:

ՀՐԱԶ ԲԱՋԱՐՆՆԵՐ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Զ Ե Ռ Ա Գ Ի Ր

Մագաղաթէ ոսկի մատեան մը սպիտակ
Ես կը բանամ հաւատքով
Դէմքըս լոյս է, հոգիս կանթեղ շողարձակ
Հին դարերու տեսլքով:

Երկաթագիր տառերն հսկայ սեւ մամեր
Կ'արտաբերեն խոնկ ու բոց,
Եւ անոնց մէջ Հայր Աստուած են նըկարեր
Լայն մօրուքով ոսկէզօծ:

Ծոցը պահուած ծաղիկի պէս անթառամ
Գոյներն են վառ ու խօսուն.
Կարծես բեկբեկ սափորին մէջ դեռ կը զգամ
Անոնց բուրեան սրբութիւնն:

Այնտեղ ժըպտուն կը պըսպըղան նըկարչին
Բիբերը Հայ՝ լայն ու թուխ,
Անոր հոգւոյն լուռ երկինքներն են խորին
Յուզումներով սըրտաբուխ:

Նոր տեսիլներ հին սուրբերու մենաւոր
Զըւարթալոյս կը բացուին,
Միւտոնաբոյր գարուններու պէս աղուոր
Շողակաթի տաճարին:

Ամէն մէկ էջ բանաստեղծի մատեան մ'է,
Ամէն մէկ տող նոր յուզում.
Այնտեղ Աստուած իր մատներով զըրեր է
Հառաչ, աղօթք և խոկում:

Ազոլոյ, 1931

Երբ առտուններն արշալոյսի պէս հըսկայ
Կողերն ոսկի կը բացուին,
Տաճարին մէջ լոյսի հեղեղ մը կու գայ
Հաւատացեալ ժամուորին:

Ո՛րքան հեշտի հոն կը հեծէ մեղեդին
Քահանային շըրթներուն,
Ո՛րքան մաքուր արցունքներով կը լեցուին
Սափորներն հայ սըրտերուն:

Հայու աղօթք գեղեցկութիւն հաւատքի
Յիսուսի պէս մարմնացած,
Հայու տաճար լոյս յարութեան հանճարի
Աստուածօրէն վերացած:

Դեռ կը հընչեն կարծես աւեր վանքերուն
Մութ կամարներն երաժիշտ,
Թուղթին վըրայ դեռ վանականը խոկուն
Կը բըրրոյմէ սէր ու վիշտ:

Թողէք որ ես նոր գարուններ տեսնեմ հոն
Մարգարէի հոգիով,
Թողէք որ ես դընեմ ճակատս վանքերուն
Մաշած շեմին տենչանքով:

Անոնք փառքի տաճարներն են հայ մըտքին
Մէջը տապան սըրբատուփ.
Հոն մեր հաւաքըն, յոյսն և անցեալը կ'ապրին
Նոր գալիքով խոովածուփ:

Հ. ՎԱՀԱՆ ԵՌԱՅԱՆՆԵՍԵԱՆ

Խ Ո Ր Լ Է

Հեղ մը խորհէ որ գիշեր մը լուռ ու պայծառ՝
Պիտի աստղեր շողան ճերմակ քարին վըրայ,
Արծաթեղով փորագըրուած տող մը թշուառ,
Ու տողը այդ անունը քու պիտի ըլլայ:

Խորհէ նաեւ թէ օրէ օր գիշերն այդ խոր
Կը մօտենայ. լաց ու աղերս են ընդունաքն,
Եւ քու կեանքն ալ ամէն կեանքի պէս անցաւոր՝
Ժամանակի սրտի մէկ խուլ զարկն է միայն:

Ափ մը կորուտ և ափ մը շահ՝ յետոյ կոտտանք,
Եւ քիչ մըն ալ բարեխառնող ծիծաղ ու պար.
Քիչ մը տանջանք, քիչ մը յանցանք, քիչ մը պարծանք,
Ու մարմարի վըրայ գըրուած տող մը թշուառ...

ՎԱՀՐԱՄ ՍՕՅՆԱՆ